

ծան, ապա ի Թվականին ՌՄԽԷ (≡ 1798) կրկին յարդարեալ շինեցան խողովակք անցից ջրոյն, խոհական վերակացութեամբ սարկաւազ տիրացու Մարտիրոսին: Եւ ի ջրոյ անտի նորոգապէս աղբիւրակ ինչ շինեալ հաստատեցաւ յեկեղեցւոջ սրբոյ Խաչին, ջանիւք եւ աշխատութեամբ նոյն տիրացու Մարտիրոսին, որ էր լուսարար եկեղեցւոյ սրբոյ Խաչին, եւ մանկավարժ վերոյիշեալ նորակերտ դպրոցին:,,

“Եւ երկրորդ Թաղն կոչի Եէնի մահալլէ, եւ ունի սա բարեձեւ եկեղեցի մի յանուն սրբոյ Կարապետին Յովհաննու: Ջայս եկեղեցի նախ շինեաց Վանեցի Ջաքարիա վարդապետ, որ եղեւ Պատրիարք ի Կ. Պոլիս ի Թուին Հայոց ՌՀԶ (≡ 1627), ուր ի գերեզմանատան անդ կայ եւ տապան շիրմի նորա: Քանզի աւանդեն ծերունիքն վիճակի սրբոյ Կարապետին, Թէ այս եկեղեցի յառաջագոյն էր մատուռ ինչ ի տեղւոջ փոքրիկ աղբերն որ կայ հանդէպ արտաքին դրան այժմ եկեղեցւոյ, ի կողմանէ վանացն Երուսաղեմացւոց: Որ ապա յայսկոյս անցուցեալ, եւ յայսմ տեղւոջ զսոյն հաստատեալ շինեցին զայս եկեղեցի ի Թվականին Հայոց ՌԿԶ (≡ 1617), Հոգաբարձութեամբ վերոյիշեալ Վանեցի Ջաքարիա Վ.ին, յորում ամի եդեալ է յիշատակ ի նմա եւ խաչ մի արծաթեայ եւ գրեալ ի վերայ նորա “Սուրբ Խաչս յիշատակ է Ջաքարիա վարդապետին օգնականութեամբ Իւսքիւտարու ժողովորդեան ի դուռն սուրբ Կարապետին, Թվին ՌԿԶ” (≡ 1617): Այս Ջա-